ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀԿԱ-ԲԸԱՀԾՁԲ-16/44>>

ք. Երևան

<<14>> դեկտեմբեր 2016թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Մխիթարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 932000 (ինը հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 23-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **23** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ. շ. 7, բն. 10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022192	Հ/Հ 220000129423-000
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00031518
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ info@helix.am
------------------------	------------------------
/ Գ. Բեգլարյան /	/ Ս. Մելիքյան /
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<14>> դեկտեմբերի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ԲԸԱՀԾՁԲ-16/44 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

www.e-gov.am միասնական էլեկտրոնային համակարգում իրականացվելիք փոփոխությունների և ծանուցման ինստիտուտի ներդրման ծառայություններ

1. Գործող կայքում իրականացվելիք փոփոխություններ

www.e-gov.am կայքում ելնելով կառավարության կողմից ընդունված մի շարք որոշումներից, նախատեսվում է իրականացնել փոփոխություններ, որոնք վերաբերվում են լիցենզիաների տրամադրմանը, ծանուցումների ընդունման նոր համակարգի և որակավորման վկայականների ու հավաստագրերի համար դիմումների ներկայացման մոդուլների իրականացմանը:
Ակնկալվող փոփոխություններն ու ավելացումները մանրամասն ներկայացվում են ստորև:

1. **Կայքի գործող տարբերակում պետք է իրականացվեն հետևյալ փոփոխությունները՝**
   - «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ» մոդուլից անհրաժեշտ է հանել «Անվտանգության բնագավառ» տողը
   - «Տրանսպորտի բնագավառ» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում» տեսակը
   - «Գյուղատնտեսության բնագավառ» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» տեսակը
   - «Գործունեության այլ բնագավառներ ենթաբաժնից» անհրաժեշտ է հանել բոլոր առկա տեսակները՝ թողնելով միայն «Աուդիտորական ծառայությունների մատուցում» տեսակը
   - «Տրանսպորտի բնագավառ» ենթաբաժնում առկա «Անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում» տեսակը անհրաժեշտ է վերանվանել «Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում»
   - «Տրանսպորտի բնագավառ» ենթաբաժնում առկա «Անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ավտոմոբիլներով և կազմակերպությունների կողմից (անկախ ավտոմոբիլների

քանակից) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում» տեսակը վերանվանել «Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում»:

- «Փոստային կապի բնագավառ» ենթաբաժնում առկա «Փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոտային փոխադրումների, մատուցում» տեսակը վերանվանել «Փոստային կապի գործունեություն»:
- «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ» մոդուլում անհրաժեշտ է ավելացնել «Բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառանվամբ բնագավառը և նրանում որպես ենթաբաժին ավելացնել <<Ինկասացիոն ծառայությունների մատուցում>> լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը պետք է նախատեսված լինի միայն իրավաբանական անձանց համար և ունենա կից փաստաթղթերի հետևյալ ցանկը՝
  - ✓ հայտատուի՝ առնվազն 4 աշխատողի մասնագիտական որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականների պատճենները և նրանց մոտ զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության մասին բժշկական եզրակացությունները,
  - ✓ քաղվածքներ մասնագիտական որակավորում ունեցող առնվազն 4 աշխատողների աշխատանքային գրքույկներից,
  - ✓ մասնագիտական որակավորում ունեցող առնվազն 4 աշխատողների զինվորական գրքույկների և անձնագրերի պատճենները,
  - ✓ «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները բավարարող զրահապատ ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալներին վերաբերող փաստաթուղթը.
  - ✓ ինկասացիոն կազմակերպություններին, նրանց կողմից օգտագործվող ավտոտրանսպորտային, տեխնիկական անվտանգության և այլ միջոցների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

- «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ» բաժնում տրամադրող գերատեսչությունների ցուցակի «Գյուղատնտեսության նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» տեսակը

- «Գյուղատնտեսության նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրություն» տեսակը
- «Գյուղատնտեսության նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրություն և (կամ) վաճառք»
- «Գյուղատնտեսության նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրերին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն» տեսակը
- «Էկոնոմիկայի նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Առևտրի իրականացման վայրի կազմակերպում» տեսակը
- «Էկոնոմիկայի նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում» տեսակը
- «Էկոնոմիկայի նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում» տեսակը
- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն» տեսակը
- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն» տեսակը
- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» տեսակը
- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Գարեջրի արտադրություն» տեսակը

- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» տեսակը
- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» տեսակը
- «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնում ավելացնել «Ինկասացիոն ծառայությունների մատուցում» բաժինը և որպես հայտատու նշել միայն իրավաբանական անձանց
- «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ» բաժնում տրամադրող գերատեսչությունների ցուցակի «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնի <<Աուդիտորական ծառայությունների իրականացում>> բաժնից հանել որպես հայտատու նշված <<անհատ ձեռնարկատեր>> և <<ֆիզիկական անձ>> հասկացությունները՝ հաշվի առնելով, որ <<Աուդիտորական գործունեության մասին>> ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն անհատ ձեռնարկատերերը 04.07.2011թ.-ից (26.05.2011թ. թիվ ՀՕ-207-Ն օրենք) այլևս չեն կարող ստանալ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա:
- «Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգ» բաժնում տրամադրող գերատեսչությունների ցուցակի «Ֆինանսների նախարարություն» ենթաբաժնից հանել <<Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում>> գործունեության տեսակը, քանի որ 25.05.2016թ.-ից այն լիցենզավորող լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը:
- «Տրանսպորտի և կապի նախարարություն» ենթաբաժնից անհրաժեշտ է հանել «Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում» տեսակը
- «Տրանսպորտի և կապի նախարարություն» ենթաբաժնում «Անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում» տեսակը վերանվանել «Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում»
- «Տրանսպորտի և կապի նախարարություն» ենթաբաժնում «Անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ավտոմոբիլներով և կազմակերպությունների կողմից (անկախ ավտոմոբիլների քանակից) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում» տեսակը վերանվանել «Անհատ

ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներովուղևորափոխադրումների կազմակերպում»

- «Տրանսպորտի և կապի նախարարություն» ենթաբաժնում «Փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրումների, մատուցում» տեսակը վերանվանել «Փոստային կապի գործունեություն»:

2. **Կայքի գործող տարբերակում պետք է ավելանա իր տեսքով «Լիցենզիաների հայտերի ընդունման համակարգ» բաժնին համարժեք «Ծանուցումների ընդունման համակարգ» բաժինը**, որը պետք է հնարավորություն տա ընտրել գործունեության տեսակն ըստ
   2.1 Բնագավառի
   2.2 Տրամադրող գերատեսչության

2.1 Որպես գործունեության բնագավառ պետք է առկա լինեն հետևյալ ենթաբաժիններն իրենց համապատասխան տեսակներով՝

- Անվտանգության բնագավառ
  - Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր
- Գյուղատնտեսության բնագավառ
  - Անասնաբուժասանիտարական փորձաքննություն
- Գործունեության այլ բնագավառներ
  - «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն
  - Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն
  - Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն
  - Խաղողի օղիների և խաղողի օղու տորվածքների արտադրություն
  - Գարեջրի արտադրություն
  - Առևտրի իրականացման վայրի կազմակերպում
  - Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում
  - Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում

- Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրերին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն

2.2 Որպես տրամադրող գերատեսչություն պետք է առկա լինեն հետևյալ ենթաբաժինները , որոնք համապատասխանաբար պետք է ունենան իրենց տեսակները՝

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
  - Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում
  - Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում
- ՀՀ ֆինանսների նախարարություն
  - Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր
  - Անասնաբուժասանիտարական փորձաքննություն
  - «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն
  - «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն
  - Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն
  - Գարեջրի արտադրություն
  - Առևտրի իրականացման վայրի կազմակերպում
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
  - Անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրություն
  - Բույսերի պաստպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրություն և (կամ) վաճառք
  - Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, 2208 ծածկագրին դասվող միայն պտուղներից և հատապտուղներից

(բացառությամբ խաղողի) թորած 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների ինչպես նաև խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն

- Խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրություն

Ծանուցում ներկայացնող անձի համար պետք է հնարավոր լինի ընտրելու 3 տարբերակներից մեկը՝

- Իրավաբանական անձ
- Անհատ ձեռնարկատեր
- Ֆիզիկական անձ

Տարբեր ենթաբաժիններում կարող են առկա լինել նշված տարբերակներից կամ բոլորը կամ նրանք, որոնք տվյալ դեպքի համար սահմանված են << օրենսդրությամբ:

Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար ներկայացվող ծանուցումը համաձայն << կառավարության 30.06.2016թ թիվ 673-Ն որոշման ունի սահմանված ձև, որն ընդհանրական է բոլոր ենթաբաժինների ծանուցումների համար, և ունի հետևյալ տեսքը՝

- Իրավաբանական անձանց դեպքում

_____ իրականացման վերաբերյալ (ծանուցման ենթակա գործունեության տեսակը)	
Իրավաբանական անձի (պետական կամ համայնքի հիմնարկի) անվանումը	
Պետական գրանցման համարը	
Իրավաբանական անձի (պետական կամ համայնքի հիմնարկի) գտնվելու վայրը	
Գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե օրենքի համաձայն ծանուցման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն ծանուցման մեջ նշված վայրում)	
Կից ներկայացվում է պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը	□□□□□□□□□□□□□□□□□□□□
Հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (լրացվում է ծանուցողի ցանկությամբ) _____	

Ծանուցում ներկայացրած անձ	_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը, պաշտոնը (առկայության դեպքում)) ____ _____ 20 թվական

- Անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի համար

_____ իրականացման վերաբերյալ

(ծանուցման ենթակա գործունեության տեսակը)

Անհատ ձեռնարկատիրոջ/ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը	
Պետական հաշվառման համարը/ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) համարը և սերիան	
Անհատ ձեռնարկատիրոջ/ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի բնակության կամ հաշվառման վայրը	
Գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե օրենքի համաձայն ծանուցման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն ծանուցման մեջ նշված վայրում)	
Կից ներկայացվում է պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը	□□□□□□□□□□□□□□□□□□□□

Հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (լրացվում է ծանուցողի ցանկությամբ)

_____

Ծանուցում ներկայացրած անձ	_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը, պաշտոնը (առկայության դեպքում)) ____ _____ 20 թվական

3. **Կայքում պետք է ավելացնել տնտեսվարող սուբյեկտների կողմից որակավորման վկայականների և հավաստագրերի համար ներկայացվող դիմումներն ու անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային թվային ստորագրությամբ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու բաժին:**

Բաժինը պետք է ունենա 3 ենթաբաժին՝

- Հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգ
- Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղներ զտարկողների և թանկարժեք մետաղներ հարգորոշողների ու հարգադրոշմողների որակավորում
- Քիմբերլի գործընթացի հավաստագիր

Ստորև ներկայացվում են ենթաբաժինների համար նախատեսված դիմումների ձևերը (որոնք կայքում պետք է բերվեն էլեկտրոնային լրացման տարբերակի) և կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերը:

3.1 Հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգ

Էլեկտրոնային եղանակով հայտը ներկայացնելու և ընդունելու գործընթացն իրականացվում է հետևյալ կերպ՝որակավորման կարգ ստանալու համար հայտատուն Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման համակարգի (www.e-gov.am կայքի) «Որակավորման վկայականների և հավաստագրերի հայտերի ընդունման համակարգ» բաժնում տրամադրող գերատեսչություններից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը նշելուց հետո ընտրում է «Հայաստանի Հանրապետությունում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում» ենթաբաժինը, ինչպես նաև հայտատուի տեսակը և լրացնում հայտը՝

ՀԱՅՏ

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու _____

(իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն,

(առկայության դեպքում) կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը,